

## Հայ գրատպության 500-ամյակի առթիվ

### ԷՋԵՐ ՎՐԱՅԱՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1885-1920 ԹԹ.)

#### ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ

Շուտով բոլորելու է հայկական տպագրության սկզբնավորման 500-ամյակը, որն, անշուշտ, դառնալու է համաշխարհային մշակութային կյանքի խոշոր իրադարձություններից մեկը: Այդ մեծ հոբելյանի առիթն օգտագործելով՝ մենք պետք է անցած կեսհազարամյակի ընթացքում ստեղծված մեր տպագիր գանձերը հավուր պատշաճի ներկայացնենք աշխարհին:

1801 թ. սկիզբ դնելով Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործընթացին՝ ընդամենը մի քանի տարի անց՝ 1805 թ., ցարական կառավարության տեղական մարմինները Թիֆլիսում հիմնադրում են ռուսական, վրացական և հայկական տառատեսակներով տպարան Վրաստանի ազգաբնակչությանը Ռուսական կայսրության օրենքներին ու որոշումներին իրենց մայրենի լեզվով իրազեկ դարձնելու նպատակով: Այդ տպարանը տնօրինում էր ռուսաց զինվորական վարչությունը: Դրա մասին հետագայում Ա. Երիցյանը գրել է. *«Ռուսաց զինվորական վարչության ձեռքում կար հայատառ մի փոքրիկ մամուլ լույ պաշտոնական թղթեր տպելու համար»*<sup>1</sup>: Կարելի է փաստել, որ Թիֆլիսում դեռևս 1805 թ. գոյություն է ունեցել հայկական տպագրություն՝ տեղական իշխանության հրահանգներն ու փաստաթղթերը նաև հայերեն տպագրելու համար:

Սակայն զուտ հայկական տպարան Թիֆլիսում ստեղծվել է 1819 թ. Գևորգ Արծրունու ջանքերով, որը 1824 թ. նվիրվել է նորաբաց Ներսիսյան դպրոցին: Ա. Երիցյանն այդ մասին նույնպես նշում է. *«Արծրունին տառերի եւ մյուս պարագաների հետ բերած էր միայն մի փոքրիկ փայտեայ մամուլ, վասն որոյ Ներսեսը յուր միջոցներով ձեռք բերեց մի մեծ մամուլ եւ մյուս պակասորդ իրեղենները: Շուտով Արծրունոյ օրինակին հետեւեց քաղաքիս հայազն իշխան Աղամալ Խօջամիմասեանցը՝ ընծայելով ռուսերեն տառերի պղնձե մայրերը, ձեռք բերվեցան նմանապես վրացերեն, պարսկերեն եւ լատինական տառեր: Տպարանս ուներ բաւականչափ պողպատեայ գանազան գարդեր, ծաղկատառեր եւ պատկերներ»*<sup>2</sup>: Այս տպարանում էլ 1823 թ. լույս է տեսել հայերեն առաջին գիրքը Վրաստանում<sup>3</sup>:

<sup>1</sup> Աղեքսանդր Երիցեան, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824-1899 թթ.), Կ. Ա (1824-1850 թթ.), Թիֆլիս, 1898, էջ 120:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120-121:

<sup>3</sup> Նախախորհրդային շրջանում Թիֆլիսում գործած հայկական տպարանների և գրատպության համառոտ պատմությունը մենք ժամանակին ներկայացրել ենք առանձին հոդվածով (տես **Վ. Ս. Մաղալյան**, Հայկական տպագրությունը Վրաստանում (XIX դար–XX դարի սկիզբ), «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, № 1, էջ 160-174), ուստի այստեղ չենք անդրադառնում Թիֆլիսի հայկական տպագրությանը: Միայն ավելացնենք, որ նշված աշ-

Հետագա տասնամյակներում՝ հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո, Թիֆլիսում բուռն վերելք է ապրում հայկական տպագրությունը, հիմնադրվում են բազմաթիվ հայատառ տպարաններ, ստեղծվում է հարուստ մամուլ, գործում է Հայկական հրատարակչական ընկերությունը, բացվում են գրադարաններ, գրախանութներ, և դարավերջին Թիֆլիսն արդեն դառնում է հայ գրականության ու մշակույթի առաջատար կենտրոնը Անդրկովկասում: Իհարկե, այդ շրջանում հայկական տպարաններ էին ստեղծվել նաև Անդրկովկասի հայաշատ բազմաթիվ այլ քաղաքներում:

Նույն տարիներին էլ տպագրական գործն արմատավորվում է Վրաստանի հայաբնակ գավառներում ու մարզերում: Շուտով տպարաններ են հիմնադրվում Ախալցխայում, Ախալքալաքում, Սղնախում, Բաթումում ու Սուխումում, որոնք լույս են ընծայում հայերեն զանազան գրքեր ու թերթեր, բազմացնում են իշխանության տեղական մարմինների որոշումներն ու հրահանգները: Մեր նպատակն է այստեղ ներկայացնել հայկական տպարանների հիմնադրման և գրատպության սկզբնավորման ու զարգացման պատմությունը՝ սկսած XIX դարի վերջին քառորդից մինչև Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումը<sup>4</sup>:

Սակայն, նախքան բուն նյութին անցնելը, նշենք, որ ցարդ ստեղծվել են հայ գրքի և տպագրության արվեստի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ<sup>5</sup>: Տարբեր ժամանակներում հրապարակ են հանվել հայ տպագիր գրքի մատենագիտական ցանկեր<sup>6</sup>:

Վերջերս այս ամենին ավելացավ հայ տպագիր գրքի ամբողջական մատենագիտությունը՝ չորս ստվարածավալ հատորներով, որոնց երկրորդ հատորը տպագրվել է դեռևս 1967 թվականին<sup>7</sup>, իսկ մյուսները՝ հետագայում<sup>8</sup>:

---

խատանքում մենք ճշգրտել ենք Վրաստանում հայկական առաջին տպարանի հիմնադրման տարեթիվը և այն 1823-ից տեղափոխել 1819-ը:

<sup>4</sup> Մենք այստեղ Վրաստանը, որպես առանձին հանրապետության անուն, օգտագործում ենք պայմանականորեն՝ նկատի ունենալով նրա ներկայիս կարգավիճակն ու սահմանները: Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում Վրաստանը, ինչպես և Հայաստանը, գտնվել են Ռուսաստանի կազմում, այդ թվում նաև՝ այն հայաբնակ գավառներն ու մարզերը, որոնց մասին այստեղ խոսվում է: Դրանք խորհրդային շրջանում են մտցվել Վրաստանի կազմի մեջ:

<sup>5</sup> Տես **Գարեգին Չարրհանալեան**, Պատմություն հայկական տպագրության (1513-1895), Վենետիկ, 1895, **Լեո**, Հայկական տպագրություն, հ. 1-2, Թիֆլիս, 1901-1902, **Թեոդիկ**, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, **Գարեգին Լևոնյան**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1946 և 1958, **Արամ Բաբայան**, Հայ գիրքը և տպագրությունը, Եր., 1963, **Քնարիկ Կորկոտյան**, Հայ տպագիր գիրքը Կոնստանդնուպոլսում (1567-1850 թթ.), Եր., 1964, **Ռաֆայել Իշխանյան**, Հայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 1977, **Նույնի**՝ Հայ գիրքը, Եր., 1981, **Նույնի**՝ Հակոբ Մեղապարտ, Եր., 1982 և այլն:

<sup>6</sup> Տես «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512-1800)», համառոտ նկարագրություններով և ծանոթագրություններով, կազմեցին՝ Յ. Մ. Դավթյան, Յ. Յ. Սիլվանյան, Ն. Ա. Ոսկանյան, Զ. Ա. Կորկոտյան, Մ. Ե. Միրզոյան, Ա. Մ. Սավալյան, խմբագրությամբ՝ Յ. Ս. Անասյանի, Եր., 1963, **Ռ. Իշխանյան**, Հայ հնատիպ գիրքը, Եր., 1968 և այլն:

<sup>7</sup> Տես **Հայկ Դավթյան**, Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Մատենագիտություն, խմբագրությամբ՝ Յ. Ս. Անասյանի, Եր., 1967, LXXXIII + 539 էջ:

<sup>8</sup> Տես «Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն», հ. Ա, կազմողներ՝ Ն. Ոսկանյան, Զ. Կորկոտյան, Ա. Սավալյան, առաջաբանը՝ Ն. Ա.

Այդ մատենագիտության ստեղծման համար անհրաժեշտ է եղել ուղիղ կես դար (1958-2007 թթ.), որին մասնակցել են բազմաթիվ անվանի մատենագետներ ու գրքագետներ: Նշված հատորներն ընդգրկում են ավելի քան 400 տարիների (1512-1920 թթ.) ընթացքում աշխարհի տարբեր ծագերում տպագրված հայերեն գրքերի ամբողջական ցուցակները: Մի այսպիսի դարակազմիկ գործում, իհարկե, կարող են լինել նաև բացթողումներ ու բերություններ: Երբ հրապարակի վրա են այդ հատորները, այժմ կարելի է դրանք մանրակրկիտ ուսումնասիրել, համեմատել այլ մասնագիտական հրատարակությունների հետ և կատարել համապատասխան ճշգրտումներ ու լրացումներ: Միաժամանակ պարզ է, որ այդպիսի ծավալուն աշխատանք հնարավոր չէ միանգամից իրականացնել, դա կատարվելու է աստիճանաբար, տարիների ընթացքում՝ ներառելով Հայաստանի և Սփյուռքի գրքագետների ու մատենագետների կարող ուժերը:

Մենք մեր առջև դրված խնդիրների լուծման համար օգտագործել ենք վերը նշված մատենագիտության վերջին երկու (3-րդ և 4-րդ) հատորները, որոնք ընդգրկում են 1851-ից մինչև 1920 թ. ընկած ժամանակահատվածում տպագրված հայերեն գրքերի ցուցակները, և նկատել ենք, որ մեզ հայտնի մի քանի անուն գրքեր, որոնք այդ ընթացքում տպագրվել են Ախալցխայում և Ախալքալաքում, բացակայում են, ուստի փորձել ենք կատարել որոշակի լրացումներ, տպարանների թվի ու անունների ճշգրտումներ և այլն:

\* \* \*

Վրաստանում հայկական առաջին գավառական տպարանը հիմնադրվել է Ախալցխայում 1880-ական թթ. սկզբներին<sup>9</sup>, երբ նույնիսկ վրացական գավառներում տպարաններ չէին գործում: Այդ շրջանում միայն նահանգական կենտրոն Քութայիսում է գոյություն ունեցել վրացա-

---

Ոսկանյանի, նախաբանը՝ Ռ. Իշխանյանի, Եր., 1988, 864 էջ (հատորը նվիրված է հայ տպագրության 475-ամյակին), «Հայ գիրքը 1851–1900 թթ., Մատենագիտություն», հ. Գ, կազմողներ՝ Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Օ. Գյուլումյան, Ա. Սահակյան, Ս. Թադևոսյան, առաջաբանը՝ Ն. Ա. Ոսկանյանի և Ա. Մ. Սավալյանի, խմբագրությամբ՝ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1999, 860 էջ (հատորը նվիրված է Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին), «Հայ գիրքը 1901-1920 թվականներին, Մատենագիտություն», հ. Դ, կազմողներ՝ Օ. Գյուլումյան, Ա. Ադամյան, Ս. Թադևոսյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Ա. Սահակյան, առաջաբանը՝ Դ. Սարգսյանի, խմբագրությամբ՝ Դ. Սարգսյանի և Հ. Ղազարյանի, Եր., 2007, 820 էջ:

<sup>9</sup> Գ. Լևոնյանն իր հանրահայտ աշխատության հավելվածում, ժամանակագրական կարգով ներկայացնելով հայկական տպագրությունները մինչև XIX դարի վերջը, Ախալցխայի տպարանի հիմնադրման տարեթիվ է նշում 1888-ը (տե՛ս էջ 246), որը չի համապատասխանում իրականությանը: Ախալցխայի տպարանը ստեղծվել է մինչև 1885 թ.: Անդրանիկ գիրքն այստեղ տպագրվել է 1885 թ.-ին, որն է՝ «Մի կողով ելակ» մանկական պիեսը: Գ. Լևոնյանի այդ աղյուսակում կան նաև այլ անճշտություններ, օրինակ՝ որոշ տպարանների հիմնադրման ժամկետները չեն համապատասխանում ներկայումս ընդունված թվականներին: Բացակայում են նաև մի շարք կարևոր քաղաքների անուններ, հատկապես հայկական, որոնցում դեռևս XIX դարի կեսերից գործել են հայտնի տպարաններ, և լույս են ընծայվել մի շարք գրքեր ու պարբերականներ:

կան տպարան, որտեղ 1881-1883 թթ. լույս է տեսել «Շրոմա» («Աշխատանք») վրացերեն առաջին տեղական թերթը, իսկ 1883-1910 թթ.՝ «Մծղենսի» («Հովիվ») եկեղեցական հանդեսը: Քուբայիսում հետագայում հիմնադրվել են վրացական մի քանի տպարաններ, որոնցում մինչև 1920 թ. տպագրվել են բազմաթիվ գրքեր ու պարբերականներ<sup>10</sup>: Վրացական գավառական մյուս կենտրոններում տպարաններ հիմնադրվել են միայն XX դարի սկզբներին:

Ախալցխայի այդ անդրանիկ տպարանի հիմնադիրը եղել է Սկրտիչ Ղալամբարյանը, որի մասին, ցավոք, շատ սուղ կենսագրական տեղեկություններ ունենք: Նույնիսկ անհայտ են նրա ծննդյան և մահվան տարեթվերը: Հայտնի է միայն, որ նա ծնվել և ապրել է Ախալցխայում, իսկ թե նա տպագրական գործին որտեղ էր ծանոթացել և ինչ պայմաններում, այդ մասին տեղեկություններ չունենք:

Նրա հիմնադրած տպարանում 1885 թ. լույս է տեսել Խ. Ստեփաննեի խմբագրած «Մանկավարժանոց» հանդեսը: Այս ամսագիրը հրատարակվել է 1884–1887 թվերին: Ընդ որում, Թիֆլիսում տպագրվել է 1884 և 1886 թվերին, Ախալցխայում՝ 1885-ին, իսկ Պետերբուրգում՝ 1887-ին: Այդ իսկ պատճառով «Մանկավարժանոց»-ը դասվում է «թափառող պարբերականների» շարքին:

Ախալցխայում լույս է տեսել «Մանկավարժանոց»-ի ընդամենը չորս համար: Հանդեսն արտասահմանյան (հիմնականում եվրոպական) երկրների դպրոցների կրթական գործի դրվածքով ու օրինակով փորձում է աշխուժություն մտցնել հայկական դպրոցներում, նրանց դաստիարակչական մեթոդներն ու փորձը տեղայնացնել և նոր եղանակով կրթել ու դաստիարակել հայ ուսուցիչներին: Նրա էջերում տպագրվել են ուսուցողական բնույթի նյութեր, վիճակագրական տվյալներ, խորհուրդներ մանկավարժներին ու ծնողներին: Հանդեսում զգալի տեղ է հատկացվել կրթական գործում կրոնի ունեցած դերին ու նշանակությանը, մի շարք նյութեր կան՝ նվիրված հայ եկեղեցու պատմությանը, կրոնաբարոյախոսական թեմաներին, անցյալի փառավոր էջերին ու կրթական ավանդույթներին, տրվել են Աստվածաշնչի տարբեր գլուխների մեկնաբանություններ և լուծումներ, եկեղեցական թեմերի կրթական գործունեության, դպրոցական կյանքի վերաբերյալ լուրեր, ներկայացվել է հայկական գավառների ու նշանավոր գաղթօջախների կրթական գործի պատմությունը: Հանդեսն իր էջերում անդրադարձել է նաև Ախալցխայի հոգևոր դպրոցի կենսական խնդիրներին:

«Մանկավարժանոց»-ի Ախալցխայում հրատարակված համարներն ունեն «խմբագրական հիշատակարան» և «Հայտարարություններ» մշտական բաժինները, որոնցում պարբերաբար տրվել են մասնագիտական հրատարակությունների, թերթերի ու հանդեսների, նոր լույս տեսած գրքերի մասին հակիրճ տեղեկություններ, իսկ «Գրական» բաժնում հիմնականում տպագրվել են խմբագրի բանաստեղծությունները՝ «Իշխան Բագրատունի» ստորագրությամբ: 1885-ին առանձին գրքույկով որպես «Մանկա-

<sup>10</sup> Տե՛ս **Ա. 3. Աբրամիշვიլի**. Грузинская периодика (1819-1917 гг.). Тб., 1968, էջ 45-46:

վարժանոցի» հավելված» տպագրվել է «Մի կողով ելակ» մեկ գործողությանը մանկական պիեսը (թարգմանված ռուսերենից), որը բեմադրվել է դպրոցում: Այս պիեսի տպագրությանը էլ Ախալցխայում հիմք է դրվել հայկական գրքի տպագրությանը:

«Մանկավարժանոց»-ը հայ իրականության մեջ եղել է մասնագիտական անդրանիկ պարբերականներից մեկը, որն իր որոշակի ներդրումն է կատարել հայ դպրոցի պատմության ստեղծման և կրթական գործի բարելավման ասպարեզում:

\* \* \*

Սկսած Ղալանքարյանի տպարանում «Մանկավարժանոց»-ից բացի տպագրվել են զանազան գրքեր: Առաջինը, ինչպես նշեցինք, եղել է «Մի կողով ելակ»-ը: Երկրորդ գիրքը Հարություն Մարադյանի հեղինակած «Քանդած օջախ. Անցեալից մի հիշողութիւն» հուշապատումն է, որը 1889 թ. հրատարակվել է Հովհ. Գրիգորյանի նախաձեռնությամբ<sup>11</sup>: Երրորդ գրքույկը «Կ. Տ. Ս.» հեղինակային ծածկանունով և «Որբուկի օրը» վերնագրով ռուսերենից կատարված մի թարգմանություն է, որը տպագրվել է 1891-ին: Իսկ 1898 թ. նույն տպարանում տպագրվել է նաև «Հաշիւ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Ախալցխայի ճիւղին» հաշվետվությունը:

Ախալցխայում XIX դարի վերջերին տպարան է հիմնադրել Խորեն Ասմարյանցը, որը Տիգրան Վարդանյանցի կողմից լեհերենից կատարված թարգմանությամբ 1896 թ. լույս է ընծայել Հենրիկ Սենկևիչի «Գնանք նորա յետեւից» պատմվածքը, ապա 1906-ին՝ Կարլ Կաուցկու «Աւստրիայի ճգնաժամը (լեզու եւ ազգ)» ուսումնասիրությունը, որը «Ձարկ» հրատարակչության տպագրած անդրանիկ գիրքն է և կրում է «թիվ 1» համարանիշը: Այն ռուսերենից թարգմանել է Գար. Պապոկյանը: Նույն տպարանում են լույս տեսել Երաժշտագետ Շահան Սիմոնի չորս գրքույկները. առաջինը՝ «Պատարագի երգեցողութիւն յարմարեցրած նորուսների համար» (դպրոցների բաժին, պրակ Ա, 1900 թ.): Նույնը վերահրատարակվել է 1906 թ., որը կրում է «Սուրբ պատարագի երգեցողութիւն հաւելուածով՝ յարմարեցրած նորուսների համար» վերտառությունը, ապա՝ «Հեգական մանկանց. Առաջին կանօն սաղմոսաց Դաւթի» (1907 թ.) և «Հաշիւ Արմաւիրի հայոց եկեղեցական քառաձայն խմբի (1909-1910 թթ.)» (1912 թ.): Հիշյալ տպարանում 1907 թ. տպագրվել էր նաև Ն. Հովհաննիսյանի «Լիզա» երեք գործողությանը կատակերգությունը:

Ախալցխայում լույս են տեսել նաև պարբերական մամուլին փոխարինող՝ նրա հատկանիշներով օժտված, լրատվական բնույթի գրքույկներ, որոնք ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրել են գավառում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին: Դրանց լույսընծայումը պայմա-

<sup>11</sup> Գ. Լևոնյանն այս գրքի հեղինակ է համարել Գաբրիել Սունդուկյանին, որը, ինչպես տեսնում ենք, ճիշտ չէ: Երևի նրան շփոթեցրել է ստեղծագործության վերնագիրը (տե՛ս նշվ. աշխ., էջ 231): Այս գրքի մասին մատենագիտական ճշգրիտ տվյալները տես «Հայ գրքի մատենագիտություն», հ. Գ, էջ 411, № 5295:

նավորված է եղել ծագած իրավիճակների հրատապ թելադրանքով: Այդպիսիք են, օրինակ, անցյալ դարասկզբին Մ. Թ. ճուլարտյանցի նորաբաց տպարանում 1908 թ. տպագրված «Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան 1906-1908 թթ. գործունեութեան տեղեկագիրը» և եռալեզու (հայերեն, ռուսերեն, վրացերեն) «Աթոռակալաց ընտրութեան եւ անոնց իրաւանաց եւ պարտականութեանց նկատմամբ տուեալ ի Տիրասպոլու հռովմեական կօնսիստօրեայէ ի 29 նոյեմբերի 1907 թ. կանօնքը», ինչպես և Հռոմի Լևոնյան հայոց դպրոցի նախկին սան Հակոբ վարդապետ Բագրատյանի 1909 թ. մայիսի 16-ին արտասանած ճառ-դամբանականը «Ի սգալի մահ վաղամեռիկ Անտոնի կիսասարկաւագի Փիլոսեան Արդուինցւոյ՝ յաշակերտին քահանայապետական Լեւոնեան հայ դպրոցի որ ի Հռովմ»: Սույն դամբանականը հրատարակվել է Սարգիս վրդ. Տեր-Աբրահամյանի կարգադրությամբ՝ 1909-ին: Իսկ մինչ այդ՝ 1907 թ., նույն տպարանում լույս էր տեսել Պողոս Քաջորյանցի «Սգոյ գիշեր» գիրքը:

Ախալցխայի մյուս հանրահայտ տպարանը պատկանել է Մարտիրոս և Հայկ Մարտիրոսյանց եղբայրներին, որ նրանք հիմնադրել են XX դարի սկզբներին: Այդ տպարանից 1905 թ. լույս է տեսել երկու գիրք՝ Ս. Կլայեկչյանի «Բարի ընկերս» վեպը և Սարգիս Խոջայեանց-Խաչատրյանի «Նոր վեպիկը», որը նվիրված է Սիմոն Գրիգորյան-Հովհաննիսյանի կյանքին ու դառը ճակատագրին: Նույն տարում է տպագրվել նաև «Արեան վրեժ» գրքուկը\*: Իսկ հաջորդ տարում՝ 1906-ին լույս ընծայված գրքերի շարքում աչքի են ընկնում Աբ. Մանանդյանի կազմած «Ազգային քնար» երգարանը և Պերճ Գայֆեճյանի «Հովիկ» արձակ բանաստեղծությունների ժողովածուի երկու պրակները: Նույն բանաստեղծի մեկ այլ ժողովածու, որ կրում է «Կեանքի գնով» վերնագիրը, տպագրվել է 1909-ին:

1907-ին տպագրվել է «Մարդկային կրքերի դաստիարակութեան կանոններ» թարգմանական գիրքը: Մարտիրոսյանց եղբայրների տպարանի արտադրանքի մեջ հատկապես աչքի է ընկնում Սիոն վարդապետ Տեր-Մանվելյանի «Եզիդի կուրմանժ» ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1910 թ. և արժեքավոր տեղեկություններ է պարունակում եզիդների կուրմանժ ցեղի ազգագրության, կենցաղի, լեզվի ու սովորույթների մասին: Այս տպարանում է տպագրվել նաև Ջավախք-Մեսիսեթյան գավառների ՀՅԴ կուսակցության տեղական կազմակերպության օրգան «Շարժում» թերթը (1917-1918 թթ.), որն ունեցել է հավելվածներ: Դրանցից նշենք, օրինակ, Մ. Ջարաֆյանի հեղինակած «Ինչպես հիմնենք սպառողական ընկերութիւններ գյուղում» (1917 թ.) գրքուկը\*:

Ախալցխայում 1910-ական թթ. վերջերին գործել է նաև Հեպիայան եղբայրների տպարանը, որը լույս է ընծայել զանազան հայտարարություններ, մահազոհներ ու գովազդներ և տեղեկատվական բնույթի հայերեն, վրացերեն և թուրքերեն նյութեր: Սակայն գրքի տպագրություն այստեղ կատարվել է, թե՞ ոչ, չենք կարող ասել. փաստեր չունենք:

---

\* Այս և սրանից հետո տեքստում վկայակոչված այն գրքերը, որոնք տպագրվել են Ախալցխայի ու Ախալքալաքի տպարաններում և նշված են աստղանիշերով, ընդգրկված չեն «Հայ գրքի մատենագիտության» ցուցակներում, որոնց ընդհանուր թիվը, մեր հաշվարկներով, անցնում է հինգից:

Այսպիսով, XIX դարի վերջին քառորդում և XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում Ախալցխայում գործել է հինգ տպարան, որոնք տպագրել են երկու պարբերական՝ իրենց հավելվածներով, և երկուսուկես տասնյակից ավելի անուն ինքնուրույն ու թարգմանական գրքեր, երաժշտական գրականություն, հաշվետվություններ, որոնց մի զգալի մասը ցարդ մնում է անհայտության մեջ:

Հիշյալ տպարաններից Մ. Ղալամքարյանի տպարանը, ըստ երևույթին, XIX դարի վերջերին կամ էլ XX դարասկզբին փակվել է, որովհետև դրանից հետո Ախալցխայում հրատարակված գրքերի վրա նրա անունն այլևս չի հիշատակվում: Նույնը կարելի է ասել նաև Յ. Մարադյանի և Մ. ճուլարոյանցի տպարանների մասին, որոնք փակվել են 1918 թ., երբ Ախալցխան ընկել է թուրքերի ձեռքը: Իսկ մյուս երկու տպարանները գործել են մինչև Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Դրանից հետո դադարեցվել է նաև Հեպիպյան եղբայրների տպարանի գործունեությունը, ուստի մնացել է միայն Մ. և Յ. Մարտիրոսյանց եղբայրների տպարանը, որը պետականացվել է ու իր գործունեությունը շարունակել նաև 1920-ական թվականներին: Իսկ հետագայում՝ 1930 թ., նրա հինքի վրա ձևավորվել է Ախալցխայի շրջանային տպարանը՝ հայերեն, վրացերեն և թուրքերեն տառատեսակներով, ուր և այդ լեզուներով տպագրվել են նորաստեղծ շրջանային թերթերը: Մարտիրոս և Յայկ Մարտիրոսյանց եղբայրները խորհրդային կարգերի օրոք ևս մինչև իրենց կյանքի վերջը աշխատել են այդ նույն տպարանում որպես վարիչ և տպագրիչ:

\* \* \*

Ջավախքի կենտրոն Ախալքալաքում առաջին և միակ տպարանը նույնպես հիմնադրվել է XIX դարի վերջերին Միսաք և Ալեքսանդր Գրիգորյան եղբայրների կողմից, որոնք մշտական բնակության համար այստեղ էին տեղափոխվել իրենց ծննդավայր Ախալցխայից: Նրանք նոր դարասկզբին (1905-1906 թթ.) անգլիական տպագրական նոր սարքավորումներ ու մեքենաներ են ձեռք բերում Գերմանիայից ու վերազինում Ախալքալաքի տպարանը:

Սկզբնական շրջանում այստեղ տպագրվել են զանազան ազդագրեր, հայտարարություններ ու փաստաթղթերի ընդունված տպածներ, կատարվել են քաղաքացիական ու զինվորական պատվերներ: Առաջին գիրքը, որ լույս է տեսել այդ տպարանում (1908 թ.), եղել է «Ախալքալաքայ Յայոց ս. Մեսրոբեան և ս. Սանդուխտեան ծխական երկսեռ երկդասեան ուսումնարանների 1905-06, 1906-07 եւ 1907-08 թւականների հաշիւը», ապա 1913 թ. լույս է տեսել Վ. Այ-Վազի (Վարդան Այվազյան - Վ. Մ.) «Լեւոնի դատը. մանկական պիես մեկ արարուածով» դրաման և նույն հեղինակի «Կեանքի ճամբին (մենութեան խոհեր)» (1914 թ.) գրքույկը: Ապա նույն տարում լույս է տեսել Միքայել Մութաֆյանի «Տանջանքի բովից» արձակ ստեղծագործությունների ժողովածուն, իսկ 1917-ին տպագրվել է Գ. Նովոտորժսկու «Ազգային հարց. Ավտոնոմիա եւ ֆեդերացիա» աշխատության հայերեն

թարգմանությունը՝ կատարված «Գ. Խ.»-ի կողմից: Այն հրատարակվել է ««Յառաջի» գրադարան» մատենաշարով (թիվ 71):

Այս տպարանում է տպագրվել նաև Վ. Շահպարտյանի հիմնադրած «Ջավախք» շաբաթաթերթը (1913-1916 թթ.), որն ունեցել է ««Ջավախքի» գրադարան» մատենաշարով գրական-գեղարվեստական հավելվածներ: Դրանք առանձին գրքույկներով տարին մեկ-երկու անգամ լույս են տեսել և անվճար բաժանվել թերթի բաժանորդներին: Դրանցից են Հովհ. Մալխասյանի «Ջավախքի երազը. գրական-գեղարվեստական պատկերը»\* և Վարդան Այվազյանի «Երազը կատարուեց. պատկեր գիւղական կյանքից» (1913 թ.) ստեղծագործությունները:

Առաջին աշխարհամարտի շրջանում, երբ 1918 թ. եղեռնագործ թուրքերը գրավում են Ախալքալաքը և ողջ ազգաբնակչությանը կոտորում կամ գաղթի մատնում, տպարանը քանդում են և նրա սարքավորումները տեղափոխում Արդահան: Պատերազմի ավարտից հետո Մ. և Ա. Գրիգորյան եղբայրները, գաղթից վերադառնալով, մեծ դժվարություններով իրենց տպարանի սարքավորումները Արդահանից տեղափոխում են Ախալքալաք և այն կրկին վերագործարկում:

Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ախալքալաքում գործող այդ միակ տպարանը պետականացվել է և այնուհետև՝ 1924-1925 թթ., այնտեղ տպագրվող գավառային թերթի անունով կոչվել «Կարմիր Ջավախք»: Այս տպարանում 1925-1926 թթ. տպագրվել է նաև «Ռանչպար» թերթը, իսկ 1931 թ. նրա հիմքի վրա ստեղծվել է Ախալքալաքի շրջանային տպարանը, ուր սկսել է տպագրվել «Սոցիալիստական անասնաբուծություն» շրջանային թերթը:

Խորհրդային տարիներին իրենց պետականացված տպարանում շարունակել են աշխատել Միսաք և Ալեքսանդր Գրիգորյան եղբայրները, որոնք կատարել են գրաշարի, տպագրիչի ու սրբագրիչի պարտականություններ: Մ. Գրիգորյանը վախճանվել է 1941 թ. Ախալքալաքում, իսկ եղբայրը՝ Ա. Գրիգորյանը, աքսորվել է Սիբիր և 1953 թ. Ալթայի երկրամասում կնքել իր մահկանացուն: Սրանց որդիները ևս մինչև 1950-ական թթ. վերջերը աշխատել են Ախալքալաքի տպարանում<sup>12</sup>:

\* \* \*

Հայկական տպարան գործել է նաև Կախեթի կենտրոն Սղնախ քաղաքում, ուր XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ապրում էին մեծ թվով հայեր, որոնք ունեին իրենց հոգևոր - մշակութային աշխույժ կյանքը: Այստեղ կային հայկական դպրոցներ, եկեղեցիներ, հնուց եկող նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ:

---

<sup>12</sup> Այս տեղեկությունները մեզ հաղորդել են տպարանի հիմնադիր Մ. Գրիգորյանի թոռները՝ Ալեքսան և Սիլվա Գրիգորյանները, և վերջինիս ամուսին Կարլեն Աճամողլյանը, որոնք ներկայումս բնակվում են Ախալքալաքում:

Սղնախի տպարանը հիմնադրվել է XX դարի սկզբներին Ի. Գ. Տեր-Դավթյանի կողմից<sup>13</sup>, ուր 1912-1917 թթ. տպագրվել է «Խնա Կախեթիսա» («Կախեթի ծայն») «ժողովրդական-գրական և տնտեսական ամենօրյա թերթը», որը եղել է վրացերեն առաջին թերթը Կախեթում: Չնայած այս թերթը կրել է «ամենօրյա թերթ» վերտառությունը, սակայն այն լույս է տեսել հիմնականում շաբաթը մեկ, առանձին դեպքերում նաև երկու անգամ<sup>14</sup>: Իսկ հայերեն ի՞նչ է տպագրվել այդ տպարանում, այսօր դժվար է պատասխանել այս հարցին, որովհետև այդ տպարանի արտադրանքից հայերեն ոչինչ առայժմ չի հայտնաբերվել: Մեզ թվում է, որ Սղնախի տպարանը ևս, ինչպես ժամանակին գործած շատ տպարաններ, տպագրել է տեղեկատվական և գովազդային բնույթի նյութեր, կատարել է զանազան պատվերներ ու ծառայություններ:

\* \* \*

Սկսած XIX դարի վերջին քառորդից՝ հայ գրական-մշակութային կյանքն իր ծիլերն է արձակում նաև Սև ծովի կովկասյան ափերին, ուր արդուլիամիդյան բռնությունների ու կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանի տարբեր վիլայեթներից հազարավոր հայեր էին ապաստան գտել՝ գլխավորապես բնակություն հաստատելով Աջարիայի ու Աբխազիայի կենտրոններ Բաթումում ու Սուխումում: Սևծովյան ավազանի այդ քաղաքներում շուտով հիմնադրվում են հայկական կրթական ու հոգևոր հաստատություններ, գործում են շրջիկ թատերախմբեր ու երգչախմբեր, որոնք աստիճանաբար դառնում են մշտական (նստակյաց): Այդ քաղաքներում ևս հիմնադրվում են հայկական տպարաններ, որոնցում տպագրվում են գրքեր, թերթեր ու տեղեկատվական բնույթի այլ նյութեր:

Բաթումում նախախորհրդային շրջանում գործել են մի քանի տպարաններ, որոնցից չորսը լույս են ընծայել նաև հայերեն գրքեր ու թերթեր: Դրանցից առաջինը հիմնադրվել է երկու դարերի սահմանագծին Ն. Պ. Գուրոկյանի (Գուրսկի) կողմից<sup>15</sup>: Այս տպարանի անդրանիկ թողարկումը եղել է «Հաշի Բաթումի ս. Փրկիչ եկեղեցւոյ երեցփոխ Ս. Յարութիւնեանի 1898 թից 1901 թիւը» ֆինանսական հաշվետվությունը, որին հաջորդել է «Ընթերցողների ուշադրութեանը նատուցանում է Մեսրոպ Մելեանը» տեղեկատվական գրքուկը: Սրանք տպագրվել են 1901-ին: Այնուհետև՝ 1904 թ., նույն տպարանում լույս է տեսել Գրիգոր Բալասանյանի «Պստիկ Միեր» դյուցազներգական-պատմական պոեմը «Սասնա ծռերի յուշիկներից» ընդհանուր վերտառության տակ: Ն. Պ. Գուրոկյանի տպարանում լույս են տեսել նաև այլ գրքեր, որոնցից են Վսևոլոդ Գարշինի «Ազդանշան» պատմվածքը՝ Ս. Հարությունյանի թարգմանությամբ, ինչպես և Ի. Սիգովի «Ի՞նչ է ազատութիւնը» աշխատանքը՝ դարձյալ Ս. Հարությունյանի թարգմանու-

<sup>13</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10, եր., 1984, էջ 450:

<sup>14</sup> Տե՛ս **Абрамишвили А. З.**, նշվ. աշխ., էջ 155:

<sup>15</sup> Այս տպարանի պատկանելությունը Բաթումում լույս տեսած հայերեն գրքերի վրա նշված է տարբեր ձևերով՝ «Ն. Պ. Գուրսկի», «Ն. Պ. Գուրսկու», իսկ թեոդիկն իր աշխատության մեջ (տե՛ս էջ 185) նշում է «Ն. Գուրոկյան» հայկական ձևով:

թամբ: Այս երկու գրքերը լույս են տեսել 1906 թ., կրում են «Յօգուտ Բաթումի անգործ հայ բանվորների» խորագիրը և ունեն «1» ու «2» թվահամարները:

Ն. Պ. Գուրոկյանի տպարանում լույս է տեսել նաև Ս. Հարությունյանի «Գաղափարի մարդը» արձակ երկը (հրատարակություն՝ «Ս. Կ. Վ.»-ի, 1906 թ.), որն ունի ««Պայքարի» ժողովրդական գրադարան» ընդհանուր վերտառությունը: Այդ նույն մատենաշարով են տպագրվել նաև այլ գրքեր, որոնց ընդհանուր թիվն անցնում է հինգից:

Բաթումի՝ հայերեն գրքեր հրատարակող երկրորդ տպարանը հիմնադրվել է 1900-ականների սկզբին, որը պատկանել է Խ. Մ. Շմաևսկուն: Այս տպարանում ««Պայքարի» ժողովրդական գրադարան» մատենաշարով 1906 թ. տպագրվել են Ա. Անենսկայայի «Ի՞նչ է հասարակութունը» աշխատությունը՝ Ս. Հարությունյանի թարգմանությամբ: Այն կրում է հիշյալ մատենաշարի 4-րդ համարանիշը, իսկ 5-րդը՝ Ն. Մակսիմովի «Աշխատանքի տունը» գրքույկն է՝ «Ա. Մ.»-ի թարգմանությամբ: Նույն տպարանում է լույս տեսել նաև «Կանոնադրութուն բաբերոցիների հայրենակցական միութեան» իրավատեղեկատվական գրքույկը (1917 թ.):

Բաթումում գործած երրորդ տպարանը կրել է «Պրոսվեչչենիյա» անունը, որը նույնպես հիմնադրվել է անցյալ դարասկզբին: 1909 թ. այստեղ տպագրվել է Ե. Չիրիկովի «Կեանքի շէմին» ստեղծագործությունը՝ Հ. Խաչատրյանի թարգմանությամբ: Այս տպարանում հայերեն ուրիշ ինչ գրքեր են տպագրվել, և արդյոք այդ տպարանը հայկական է եղել, թե՞ ոչ, այդ մասին ոչինչ ասել չենք կարող:

Բաթումում զուտ հայկական տպարան հիմնադրվել է 1917 թ. մի խումբ հայ բոլշևիկների կողմից, որը եղել է ընդհատակյա: Այդ տպարանում Հ. Հակոբյանի, Ս. Խանոյանի, Ա. Սարուխանյանի, Ս. Ջուրաբյանի և Գ. Գրիգորյանի նախաձեռնությամբ 1917-1918 թթ. տպագրվել է «Բանվոր և զինվոր» հայերեն թերթը<sup>16</sup>: Բաթումում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այս տպարանում են լույս տեսել նաև «Կոմունիստ» (1921 թ.) և «Բաթումի բանվոր» (1922 թ.) հայերեն թերթերը:

\* \* \*

Արխագիայի կենտրոն Սուխումում ևս XX դարի սկզբներին աշխուժություն է ապրում հայ հասարակական – մշակութային կյանքը: Այստեղ 1911 թ. ստեղծվում է հայ ազգային խորհուրդ, որը ղեկավարում էր ճանաչված մտավորական, ուսուցիչ Խաչատուր Ավդալբեկյանը: Այս ժամանակ նա Սուխումում բացում է գրախանութ և հիմնադրում հայկական տպարան, որը կրում է «Պրոմեթեյ» անվանումը: Այդ տպարանում 1912 թ. սկսում է լույս տեսնել արխագահայ առաջին պարբերականը՝ «Լույս» գրական-ժողովրդական շաբաթաթերթը, որը, փաստորեն, եղել է վերոհիշյալ խորհրդի գործադիր մարմնի օրգանը: Նրա հրատարակությունը նույն տպարանում շարունակվել է նաև 1913-ին: Հետագայում այս տպարանում տպագրվել

<sup>16</sup> Տե՛ս **Չ. Տ. Գեգեշիձե**, Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունների անլեգալ տպարանները (1900-1920 թթ.), վրացերեն, Թբիլիսի, 1968, էջ 242:

են «Նոր կյանք» (1918) և «Փարոս» (1919) հասարակական-քաղաքական թերթերը, որոնք ունեցել են մենշևիկյան ուղղություն<sup>17</sup>: Սուխումում նույն տպարանում 1920 թ. լույս է տեսել նաև հայերեն «Կարմիր աստղ» բոլշևիկյան թերթը<sup>18</sup>:

Իսկ Սուխումում նախախորհրդային շրջանում հայերեն գրքեր տպագրվել են, թե ոչ, առայժմ չգիտենք, քանի որ ցարդ չի հայտնաբերվել այդ տարիներին այստեղ հրատարակված որևէ գիրք: Չնայած խորհրդային կարգերի հաստատումից հետո Աբխազիայում հայ գրական-մշակութային կյանքը բուռն վերելք է ապրել, հիմնադրվել է հայկական պետական թատրոն, բացվել են միջնակարգ դպրոցներ, գործել է Աբխազիայի խորհրդային գրողների միության հայկական մասնաճյուղ, որը ծավալել է նաև գրահրատարակչական գործունեություն, տպագրվել են հայերեն թերթեր ու գրքեր՝ դրանց լուսաբանումը դուրս է ներկա հոդվածի նպատակից:

Ամփոփելով նշենք, որ XIX դարի վերջերին և անցյալ դարի սկզբներին մեզ հետաքրքրող գավառներում ու մարզերում ընդհանուր հաշվարկով գործել է 12 հայկական տպարան, որոնցում տպագրվել են ավելի քան 50 անուն գիրք և ինը անուն պարբերական: Իր թողարկած արտադրանքի ծավալով ու տպագրության որակով առաջին տեղն զբաղեցնում է Ախալցխան (շուրջ 25 անուն գիրք ու երկու պարբերական), երկրորդը՝ Բաթումը (շուրջ 15 անուն գիրք ու մեկ պարբերական), երրորդ տեղում է Ախալքալաքը (շուրջ 10 անուն գիրք ու մեկ պարբերական), Սուխումում տպագրվել է չորս անուն պարբերական, իսկ Սղնախի տպարանում լույս է տեսել միայն մեկ պարբերական՝ վրաց լեզվով: Հայերեն տպագրությունների մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող: Այդ տպարաններում հայերենի հետ մեկտեղ տպագրվել են նաև ռուսերեն, վրացերեն, մասամբ և թուրքերեն տեքստեր, տեղեկատվական բնույթի նյութեր, հնարավոր է, որ այդ լեզուներով տպագրված լինեն նաև գրքեր: Տպարանների թվով ևս Ախալցխան գրավում է առաջին տեղը, ուր գործել է հինգ տպարան, Բաթումում՝ չորս, իսկ Սղնախում, Ախալքալաքում ու Սուխումում՝ մեկական:

Այսպիսով, հայկական տպարանների հիմնադրումը և հայ գրքի տպագրությունը Վրաստանի հայաբնակ գավառներում ժամանակին ունեցել է խոշոր նշանակություն: Չէ՞ որ տպարաններն անցյալում եղել են մշակութային կարևոր օջախներ, որոնք, տպագրելով տեղական մտավորականության գրական երախայրիքներն ու գիտական պրպտումների արդյունքները, նպաստել են նրանց ստեղծագործական ուժերի բացահայտմանը: Դրանով այդ տպարանները խթանել են տեղական գրական-մշակութային ու գիտական կյանքի աշխուժացմանն ու առաջընթացին, ստեղծագործող կարող ուժերին ու մտավորականությանը պահել են իրենց ծննդավայրում: Դրանց դերը մեծ է եղել նաև մայրենի լեզվի, հայ գրի ու գրականության պահպանման ու տարածման գործում: Տպարաններն ի-

<sup>17</sup> Տե՛ս «Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934)», առաջաբանով, ներածությամբ, ժանդագրություններով և աղյուսակներով, կազմեց՝ *Գարեգին Լևոնյան*, Եր., 1934, էջ 72, № 600, էջ 94, № 815, էջ 104, № 923 և էջ 180:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 108, № 960 և էջ 180:

րենց այդ ազգապահպան ու մշակութային կարևոր դերը, հատկապես արտերկրում ու Սփյուռքում, չեն կորցրել նաև մեր օրերում:

**ВЛАДИМИР МАГАЛЯН – Из истории армянского книгопечатания в Грузии (1885–1920 гг.).** – В статье впервые изложена история национального книгопечатания у армян Ахалцихе, Ахалкалаки и Сигнахи, а также Аджарии и Абхазии в конце XIX – начале XX столетия. Показано, в каких условиях и когда в центрах названных уездов и провинций основывались армянские типографии.

Первая в грузинской провинции армянская типография возникла в начале 1880-х годов в Ахалцихе; в ту пору в грузинской глубинке вообще не было типографий. В 1885 г. здесь увидели свет первая книга и журнал «Манкаваржаноц» («Педагогическая школа»). В конце XIX века армянская типография появилась в Ахалкалаки, а позже – в начале XX века – в Сигнахи (Кахетия), Батуми и Сухуми.

В общей сложности только в указанный период и в указанных городах было напечатано до пятидесяти армянских книг, а кроме того, по-армянски выходили восемь периодических изданий и одна грузинская газета. Интересно, что в них уделялось место и материалам информационного характера на русском и грузинском языках. Возможно, на этих языках издавались и книги.

В первую очередь следует отметить Ахалцих, в типографии которого было напечатано 25 книг и осуществлялось издание двух газет. Далее идет Батуми (15 книг и одно периодическое издание), а третье место занимает Ахалкалаки (10 книг и еженедельная газета «Джавахк»). В Сухуми выходили в свет 4 периодических издания, а в Сигнахи – одно периодическое издание на грузинском языке и различные информационные материалы.

Армянские типографии на периферии Грузии представляли собой культурные центры, вокруг которых группировались писатели и деятели просвещения. Они сыграли важную роль, поддерживая и популяризируя армянскую письменность, культуру, язык и художественную литературу. По сей день издательские центры, действующие в диаспоре, помогают утверждению национального самосознания и культурной самобытности зарубежных армян.

**VLADIMIR MAGHALYAN – On the History of Armenian Typography in Georgia (1885–1920).** – The article presents the history of the foundation of the Armenian printing-houses and printing of the Armenian books in the Armenian-populated provinces and regions of Georgia in the last quarter of XIX century and the first quarter of XX century. He introduces the preconditions of the origin of the Armenian printing, gives the overall picture of Akhaltskha's, Akhalkalak's and Seghnakhi's Armenian-populated provinces, Adzharia's and Abkhazia's literary and cultural life of that period. Then according to chronological order the author covers the history of the establishment of the Armenian printing-houses in the centres of these provinces and regions.

The first Armenian provincial printing-house was founded in Georgia, Akhaltskha, at the beginning of 1880 when there were no printing-houses in Georgian-populated provinces.

The first Armenian book and the magazine “Mankavarzhanots” (“Pedagogies”) were published there in 1885. Then in the late 19<sup>th</sup> century printing-houses were

founded in Akhalkalak and Kakhet in the town of Seghnakhi and at the beginning of the 20<sup>th</sup> century in Batumi and Sukhumi.

All in all 50 Armenian books and 8 periodicals were printed in these towns in the period of 1885-1920. Together with the Armenian publications Georgian and Russian texts and informative materials, books were perhaps also published here.

These publications are distributed in the towns as follows: first of all Akhaltskha got about 25 books and two periodicals, next came Batumi (about 15 books and a periodical), Akhalkalak – about 10 books and a periodical and at last Sukhumi (3 periodicals) and Seghnakhi (periodicals, informative materials).

These printing-houses outside Armenia served also as cultural centers that brought together local writers and artists, outstanding people. They contributed to the spreading of the native language, writings and literature, to the overall process of the development of Armenian literature and culture. Printing-houses founded in Diaspora haven't lost their national and cultural importance nowadays.